ՆԱՐԵԿԱՑՈՒ ՈՂԲԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանասիր. գիտ. դոկտոր Շ. Լ. ՆԱԶԱՐՅԱՆ

Հայտնի է, որ XVIII դարում, աշուղական բանաստեղծության վերելքին զուգահեռ, ծրագրային հիմունքներով զարգանում է հայոց դասական, գրաբար և աշխարհաբար բանաստեղծությունը։ Դա հայոց նոր և ընդհանուր վերանորոգության շարժման, անցման շրջանի հայ գեղարվեստական գրականության առանձնահատուկ երևույթներից մեկն է, նրա ակնառու նվաճումը։

Վերանորոգվող բանաստեղծությունը բնութագրվում է իբրև ողբի և սթափման, տառապանքի և հույսի բանաստեղծություն և ունի իր պատմությունը։ Վշտի, հառաչանքի, մեղքի, զղջման, ապաշխարության և միաժամանակ հույսի, հավատի, ինքնահաստատման, մաքառողական պայքարի ներքին համատեղ մի հնչուն ունի միջնադարյան հայոց հոգևոր երգը, աղոթքն ու շարականը՝ V դարից ի վեր՝ Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի, Մովսես Խորենացու և այլոց հոգևոր երգերից սկսած՝ մինչև Սիմեոն Երևանցու, Պետրոս Նախիջևանցու աղոթքները։ «Լուսաւորեցէր զՀայաստան աշխարհս ըզքեզ»,—գրում է Մովսես Խորենացին հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչին նվիրված իր շարականում[1]։

X—XIV դդ., հայոց մշակութային կյանքի համայնապարփակ զարթոնքի այդ շրջանում վերածնունդ է ապրում նաև դասական բանաստեղծությունը, հոգևոր և աշխարհիկ երգը։ Անանիա Նարեկացու, Գրիգոր Նարեկացու, Վարդան Հայկազնի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Մարաշեցու, Գրիգոր Տղայի, Ստեփանոս Օրբելյանի, Կիրակոս և Հովհաննես Երզնկացիների, Ֆրիկի և այլոց լավագույն երգերը բանաստեղծական արվեստի նոր գծերով և գաղափարական նոր բովանդակությամբ ներկայացնում են հայոց վերածննդի շրջանի բանաստեղծության կուռ համակարգը։

X—XIV դդ. վերածննդի բանաստեղծության հիմնադիրը, առաջնորդը, տեսաբանը և գործադրողը եղավ հանճարեղ Գրիգոր Նարեկացին։ Նարեկացու «Մատեան ողբերգութեան» քնարական պոեմի աստվածաշնչային, բանական և իմացական հնչյունները՝ Մովսես Խորենացու «Ողբի» քննադատանքի և Դավիթ Անհաղթի «Սահմանքի» ճանաչողական, ճշմարիտ փիլիսոփայության ներքին շաղախով, ներգործում են հետագա բոլոր դարերի հայ նշանավոր բանաստեղծների վրա։

Առաջին անգամ բանաստեղծության կենտրոնում կանգնում է մարդը, հավատացյալ բանական գոյը՝ իր անհատականությամբ, իր նոր աշխարհազգացողությամբ.

Ո՛չ ոք մեղաւոր, իբրեւ զիս,
Ո՛չ ոք անօրէն, ո՛չ ոք անարիշտ,
Ո՛չ ոք անիրաւ ո՛չ ոք չարագործ.
Ծ՛ս միայն, եւ այլ, ո՛չ ոք,
Ծ՛ս համայն, եւ յի՛ս ամենեցուն[2],—

---

1 Հ. Գաբրիել Ավետիքյան. Բացատրութիւն շարականաց. Վենետիկ, 1814, էջ 428։ Ըստ Գ. Ավետիքյանի, այս շարականը ձեռագրերում վերագրվում է նաև Հովհան Մանդակունուն։

2 Գրիգոր Նարեկացի. Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ Պ. Մ. Խաչատրյանի, Ա. Ա. Ղաղինյանի. Երևան, 1985, բան ՀԲ, էջ 535 (այսուհետև կնշենք միայն համապատասխան գլուխը և էջը)։

«Ես եմ համայնը և ամենքինն է պարփակված իմ մեջ»—սահմանում է Նարեկացին։ Սա հիրավի դարագլխային գեղագիտական ըմբռնում է։ Բանաստեղծը ձգտում է ճանաչել, հասկանալ իրերի, առարկաների աշխարհը, ներթափանցել երկնային և երկրային կյանքի երևույթների մեջ, բացահայտել նրանց առանձնահատկությունները, նրանց միջև եղած կապը, հակասություններ, այդ հակասությունները ծնող պատճառները և որը գլխավորն է՝ ուղիներ նշում դրանց վերացման համար։

Նարեկացու պոեմի հանգուցային խնդիրն է՝ իր գլխավոր հերոսին (բոլոր շնչավոր էակների առաջնորդ մարդ արարածին, բանական գոյին), որը, լինելով տիեզերքի զարդը, հեռացել է իր սահմանից՝ վերադարձնել իր սահմանը (Դավիթ Անհաղթ), սանձել նրա վնասակար կրքերը, արթնացնել նրա մեջ քնած բանականության ձայնը, իմացական և զգացական հատկությունների ներդաշնակություն ստեղծել նրա մեջ, կատարելագործել նրան ամենակատարյալի՝ աստծու օրինակով.

Կանգառեա՛ ի վերայ իմ զամենամերձ աշ քոյ
Եւ զօրացո՛ զիս շնորհաւք գթութեանդ քոյ,
Փարատեա՛ ի մտաց իմոց զմէգ մթութեան մոռացութեան՝
Ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց,
Ամբառնեալ ուշիւ իմաստիցս ի կենցաղոյս երկրէ ի բարձունս։
Լուսաւորեա՛ ի յիս վերստին զծաղումն անստուեր հրաշից գիտութեան
Աստուածութեանդ քոյ, հզաւր, արժանի լինել առնել
Եւ ուսուցանել՝ յաւրինակ բարեաց աստուածասէր լսողաց[3],—

թախանձում է Նարեկացին։ Աստծու «լույս կերպարանքով» վերափոխվելու այս ձգտումը, բանական, շնչավոր գոյի, մարդու վերափոխության այս միջոցը, աստվածանմանության գաղափարը հայոց բանաստեղծության մեջ (որը, ինչպես հայտնի է, գալիս է անտիկ շրջանի փիլիսոփաներից և քրիստոնյա հայրերից), հայոց միջնադարում, քրիստոնեական հավատքի ամրապնդման այդ շրջանում, դառնում է գրական միտում, դառնում է հայոց վերածննդի բանաստեղծության բուն հատկանիշներից մեկը։ Նկատենք նաև, որ Դավիթ Անհաղթը, դեռևս քրիստոնեության վաղ շրջանում, առանց քրիստոնեական դրոշի, ե Նարեկացին քրիստոնեության վերելքի շրջանում, քրիստոնեության դրոշով, մեկը փիլիսոփայության օրենքներով, մյուսը՝ բանաստեղծության (ողբի եղանակով) մարդու վերափոխության կատարելության, նրա աստվածայնացման հարցերում գրեթե նույն ընդհանրացումներն են անում, նույն սկզբունքները առաջադրում։

Փիլիսոփայությունը՝ սահմանում է Դավիթ Անհաղթը,—հետևում և աշակերտում է աստվածային իրողություններին, իսկ մարդկային գործերը կարգավորում, կառավարում է. «Էլ ի՞նչ կարող է լինել ավելի երանելի և վայելուչ,—շարունակում է Դավիթ Անհաղթը,—քան ըստ մարդկային կարողության աստծուն նմանվելը, որովհետև,—սահմանում է իմաստասերը,—աստծու կերպարին նատուկ են հետևյալ երեք հատկանիշները՝ բարությունը, իմաստասիրությունը և հզորությունը»[4]։ «Եւ որքան մարթ է զմարդն աստուծոյ՝ աստուծոյ նմանեցուցանել»,—գրում է Նարեկացին, կարծես թե հաստատելով Դավիթ Անհաղթին ե ապա թվում նույն առաքինությունները, որոնցով աստված օժտել է աստծու մարդուն (բան ՀԱ).

Որ արարէր զիս ի քո պատկեր պանծալի՝
Ի ձեռն վեհիդ տպաւորութեան զտկարս աւժանդակելով,
Զարդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ,

---

3 Բան ԼԴ, էջ 386։ Տե՛ս նաև՝ Դավիթ Անհաղթ և հայոց միջնադարյան գեղարվեստական գրականությունը.—«Բազմավեպ», 1981, № 3—4, էջ 243—287։

4 Դ ա վ ի թ Ա ն հ ա ղ թ. Երկեր, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի. Երևան, 1980, էջ 80, 81։

Մտաւք հոխացուցեր, իմաստիւք անցուցեր,
Հանճարով հաստատեցեր, ի չնչականացն որոշեցեր...[5]։

Նարեկացու ողբերգության խորին պատճառը մարդկային այդ բարեմասնությունների կորուստն է, բանական գոյի համար ի վերուստ տրված և իմաստասիրությամբ սահմանված առաքինությունների կորուստը.

Եւ զիա՞րդ ասացից անձին իմում մարդ դրեալս ընդ անմարդիս,
Եւ ի՞րը անուանեցայց բանական անբանիցն հիմարութեան կցորդեալս,
Եւ ո՞րպէս կոչեցայց տեսանողական՝ մթացուցեալ ղոյսս, որ յիս,
Եւ ընդէ՞ր համբաւեցայց ցգայական՝ զիմաստիցս դրունս փակեալս...[6]։

Առավել ուշագրավ է այն, որ «Մատեանում» ծայրից ծայր զարգացող այս նույն հայացքը Նարեկացին հիմնավորում է նաև «այլազգի իմաստասերի» այն դրույթով, որ հայտնի է ամենքին անմահ Եղիշեի պատմությունից. «Մահն իմացեալ անմահութիւն է, մահ ոչ իմացեալ՝ մահ»: Մահն ինքնին չարիք է,—*ընդգծում է Նարեկացին, ուրեմն անխուսափելի այդ չարիքը պետք է թեթևացնի մարդ-բանականին իմաստավորելու իր ապրած տարիների կյանքը այնպես, որ անմահանա նրա անունը, որ նա ապրի իր գործով, որ նրա* «ծառը տերևալից չմնա անպտուղ...»: Սա կատարյալ վերածննդի պատգամ է, որ տալիս է Նարեկացի քնարերգակը՝ ողջ մարդկությանը և իր ժողովրդին, սա կյանքի և մահվան փիլիսոփայության այն բարձրակետն է, որով նշանավորում է Նարեկացին հայոց դասական բանաստեղծությունը.

Քանզի եւ որպէս իմաստակի ումեմն արտաքնոյ
Բարւոք թուեցաւ չար ասել զմահ՝ առ չիմանալոյն պատճառի,
Եւ ես վկայեմ իմովս բանիւ.
Քանզի իբր ղանդղայ պահարս անասնոց՝
Մեռանիմք, եւ ո՛չ զարհուրիմք...
Տարաղրիմք, եւ ո՛չ տաղնապիմք,
Եղծանիմք, եւ ո՛չ զղջանամք,
Մաշիմք, եւ ո՛չ մտաւոեմք,
Պակասիմք, եւ ո՛չ պատրաստիմք,
Գնամք, եւ ո՛չ զգուշանամք,
Գերիմք, եւ ո՛չ եւս զգամք[7]։

Նարեկացին իր ողբական քնարականության միջոցով քննում, վերլուծում է և արտացոլում ողջ մարդկային կյանքը, նրա անհրապույր անցյալն ու ներկան և նրա գալիքը՝ անորոշ։ Այս շրջագծերում, ահա, ակներև են դառնում Նարեկացի հանճարի ներքին, ազգային և հոգևոր խորին ցավերը, հայոց ժամանակակից կյանքի, հավատքի ու հայրենիքի անհուսալի գոյավիճակի հետ կապված հարցերը։

Նարեկացին առաջինը իր ուսուցչից՝ Անանիա Նարեկացուց անմիջապես հետո, նրա «Ներբողական ասացեալ ի Ս. Կաթուղիկէ եկեղեցի, որ է ի նոր քաղաքի, որ կոչի Վաղարշապատ» բանաստեղծության ոգուն հարազատ ու համահնչուն, իր «Մատեանում» բարձրացնում է հայոց ընդհանրական եկեղեցու կաթողիկեի գաղափարը, գաղափար, որ միջին դարերում նպաստում էր քրիստոնյա ազգերի, նրանց եկեղեցու գոյատևման, միասնության ու առաջադիմությանը.

---

5 *Բան Ե, էջ 262—263։*
6 *Բան ԻԱ, էջ 326։*
7 *Բան ԾԷ, էջ 465։*

Եւ ի մատչել իմ ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի՝
Նախաժամանեսցէ՛ առ իս գթութիւն քո՝
Խաւսելով յիս զարժանն եւ զպիտանիսն
Եւ զհաճոյս քո ի ժամանակի,
Ի փառս եւ ի գովեստ աստուածութեանդ քոյ
Եւ ի լրութիւն շինութեան կաթուղիկէ եկեղեցւոյ[8]։

Նարեկացին բառացիորեն քրիստոնեության մեծ ու փոքր բոլոր եկեղեցիների միասնության, միմյանց հետ շաղկապելու, միաբանելու հարցն է առաջադրում նաև «Մատեանի» ԽԶ գլխի Բ հատվածում.

Դարձեալ այս աւրինակ հոգեւորական,
Որ զսիրոյն յագուած շաղկապէ ի մի առ եկեղեցի.
Քեւ խորհրդածի.
Իբր զի առանց բնաւից զուգամասնութեան
Կապակցել լծով հաւանականաւ զվեհն ընդ փոքուն,
Վնասել է հաստուածոյն անարատութիւն յանուն Քրիստոսի ժողովելոց։

Նարեկացին է հայոց առաջին այն բանաստեղծը, որ իր «Մատենում» և տաղերում խոսուն համեմատություններով ներկայացնում է Արարատը, Մասիսը իբրև ազգային բնապատկերներ.

Նա զի թէ զմայրս Լիբանանու ի մի լուծ կշռոց դաւգեցից,
Եւ կամ զլեառն Արարատեան
Ի կէտ ամբարձման նժարի միոյ
Արդարութեան միջնորդ կացուցից,
Ո՛չ հաւասարէ այնր հարութեան համադողակցել[9]։

Եկեղեցիների «վեհը փոքրի հետ իբրև համարժեք» ասելով, կամ Լիբանանը և Արարատը միասին հիշելով բանաստեղծը միաժամանակ քրիստոնյա մեծ ժողովուրդների հավատքի և քրիստոնյա հայության շահերի համադրությունն է ընդգծում։ Նման, առավել որոշակի հայացքի մենք հանդիպում ենք նաև նրա «Տաղ յարութեան» քնարերգության մեջ։ Այս երգի ճշմարիտ վերլուծության պատիվը պատկանում է հայագետ Գևորգ Աբգարյանին։ Հիրավի հայրենի բնության հանճարեղ խոսնակ Նարեկացին հյուսում է ազգային-պատմական, տեղագրական աներևակայելի բնապատկերներ. դրանց մեջ չորս անգամ հիշատակվում է Մասիսը, *իբրև խորհրդանիշ Հայոց երկրի.*

Սայլն այն իջանէր ի յեռեւն ի Մասեաց,
Եւ ի վերայ նորա՝ աթոռ ոսկեղէն,
Եւ ի վերայ նորա՝ բեհեզ ծիրանի.
Եւ ի վերայ նորա՝ Որդի Արքայի...

Եթէ հարիւր բարգ խոյրձան, վեց կոռնկան
Մին մանուշակ՝ խնձագիդեալ,
Ի Մասեաց յաջ կողմանէն
Ջայլիկն ածեալ են, կտցուցեալ.
Եւ ահա չշարժէր սայլիկն այն,
Եւ ահա չխաղայր անիւն այն...

Ի գիլ գայր, ի գիլ, սայլակն ի գիլ,
Ի Մասեաց յաջ կողմանէն
Սայլիկն ի գիլ գայր, ի գիլ,
Եւ ճռնչալով գայր մտանէր Երուսաղէմ[10]։

---

8 *Բան ԼԴ, էջ 336։*

9 *Բան ԽԶ, էջ 424—425, բան Թ. էջ 277։*

10 *Գ ր ի գ ո ր Ն ա ր ե կ ա ց ի. Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ Արմենե Քյոշկերյանի. Երևան, 1981, էջ 59, 61, 64։*

«Հայ հանճարը,—նկատում է Գևորգ Աբգարյանը,—հարության գաղափարը կիրառել է նաև սեփական հայրենիքի կապակցությամբ: Հայրենիքն է պատճառը, որ սայլը ընթանում է ո՞չ թե աստվածաշնչային Սինայով, այլ իջնում է «ի լեռնէն ի Մասեաց...»: Բանաստեղծի պատկերացմամբ,—շարունակում է Գ. Աբգարյանը,—Քրիստոսի հարությունը փառաբանող շքախմբի հանդիսավոր երթն սկսվում է Մասիսի աջ կողմից (ուր Էջմիածինն է) և գնում հասնում է Երուսաղեմ՝ ազդարարելով մարդկության հարությունն ու աղատությունը»[11]:

Նարեկացին քրիստոնեական համընդհանուր հավատքի և հայոց ազգային հավատքի շահերի համադրության, համաքրիստոնեական եկեղեցու կաթողիկեի հզորացման նույն հարցերն է բարձրացնում նաև «Ապարանից խաչին» նվիրված ներբողում: Ուշագրավ է նաև, որ այստեղ խաչը, որ ունի Քրիստոսի խաչելության խորհուրդը, համադրվում է երկրի, տիեզերքի քառաձև պատկերի հետ և ապա ներկայացվում նրա պատմությունը, նրա դերն ու նշանակությունը քրիստոնյա ժողովուրդների առաջադիմության ընթացքի, թշնամիների դեմ մղած նրա պայքարի մեջ և այլն: «Որ և ի սկիզբն գոյանալոյն յէէն էակաց՝ տարածումն յատակաց գետնոյն կառուցման, ի գուշակութիւն քումդ օրինակի ի կայս քառանկիւն կերպի հաստատեցաւ... Եւ հաստատեաս ի գիծ քառանման պատկառելի քոյին տեսութեան ղանյայտն հեղուսեալ, զանմարմինն բեեռեալ, զանմահն մահացեալ... Եւ սիւնհոդոս կաթողիկէ անսասանական վերինն սիրվնի՝ սիւն և նեցուկ նորին ամրոցի հաստատ պընդութեամբ դու խարսխեցար...»[12]:

Այս առումով ուշագրավ են նաև Նարեկացու աշխարհայացքի շուրջ Հ. Թամրազյանի արած համապատասխան ընդհանրացումները. «Հանճարեղ բանաստեղծը,— գրում է նա,—ստեղծել է ազգային խառնվածքի ավելի բարդ,առեղծվածային բարձր մի երևույթ: Արտասովոր ազգային, բարոյական մեծ տեսողության տեր բանաստեղծը չէր կարող ... չընկալել հայ մարդու դարերի փորձն ու բախտը»[13]:

Թեև երբեք չի լռում հայոց ողբի, Նարեկյան ողբի ձայնը, սակայն հայկական վերջին թագավորության անկումից հետո, XIV դարի II կեսից մինչև XVII դարի առաջին կեսը, երբ օտար նվաճողների կրունկի տակ ամայանում էր հայ աշխարհը, բեկվում են հայոց վերածննդի գրականության զարգացման ուղիները և կորանում՝ նաև ողբի և սթափման բանաստեղծության վերընթաց գիծը: XVIII դարում, ահա (դեռևս XVII դարի երկրորդ կեսից) հայոց նոր և ընդհանուր վերանորոգության շարժման, հայ հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի համատեղ զարգացման պայմաններում, կրոնազգային գործիչ բանաստեղծները, մայր Հայրենիքում թե գաղթավայրերում, ձգտում են, առավել ծրագրային հիմունքներով, վերականգնել վերածննդի գրականության՝ անկման դարերում կորցրած նվաճումները, ճանաչել, յուրացնել հայոց անցյալի գրական, գեղագիտական, պատմագիտական, փիլիսոփայական մտքի նվաճումները և, միաժամանակ, հետևելով Եվրոպայի և Ռուսաստանի քաղաքակրթությանը, որքան որ հնարավոր է, ստեղծել նաև նորը, ազգայինը: «Եվ հնի հենց այս մահվան մեջ է, որ սկսվում է ծնվել նորը՝ հնի վերածնությամբ,—նկատում է Մանուկ Աբեղյանը:—Պետք էր հայությունը փրկել վերջնական անկումից և վայրենացումից... Դրա համար երկու ճանապարհ է ներկայանում նրանց՝ վերածնել հին հայ կյանքը, գիրն ու գրականությունը և ապա, օգտվել եվրոպական լուսավորությունից»[14]: Այո, XVIII դարի

---

[11] Գևորգ Աբգարյան. Վերլուծություն Գրիգոր Նարեկացու «Յարութեան տաղի».— «Էջմիածին», 1974, Ա—Բ: Անվանի երաժշտագետ Ն. Թահմիզյանը նկատում է, որ Նարեկացու «Յարութեան տաղը» ունեցել է բարդ եղանակ և երգվել է դժվարությամբ:

[12] Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ Երկրորդ մատեան ճառից. Վենետիկ, Ս. Ղազար, 1827, էջ 45, 52:

[13] Հրանտ Թամրազյան. Քննադատություն. Երևան, 1985, էջ 87:

[14] Մանուկ Աբեղյան. Հայոց հին դրականության պատմություն. գիրք երկրորդ. Երևան, 1946, էջ 438:

լուսավորականները իրենց ստեղծագործություններում արտահայտեցին հայոց անցած դարերի և հատկապես IV—V և X—XIV դդ. վերածննդի՝ գիտության, գրականության, բանաստեղծության նվաճումները, միաժամանակ իրենց հայացքները սևեռելով դեպի Եվրոպա և Ռուսաստան։ «...Ահավոր անկումից, փոշիացումից, կրոնի, քաղաքակրթության, աշխարհիկ կյանքի սարսափելի վայրէջքին հաջորդած վերանորոգության մի ժամանակաշրջան էր այդ,—գրում է գրականագետ Ս. Սարինյանը,—երբ վաճառական և հոգևոր դասերի հեռատես մարդիկ միջոցներ էին ձեռնարկում կանխելու ահավոր անկումը. ազգային վերանորոգության մի շրջան, որը արձագանք լինելով եվրոպական լուսավորության, միտում ուներ վերակենդանացնելու հին Հայաստանի քաղաքակրթությունը՝ հետամտելով որոշակի քաղաքական հեռանկարներ՝ «կրթել և դաստիարակել հայրենասիրական ոգով հայ երիտասարդներին, պահպանել եկեղեցու և ազգի միաբանությունը»[15]։ Իբրև պատմական այս հանգամանքների ծնունդ, XVIII դարում զարգանում է նարեկացիական մի նոր շարժում. նշանավոր գործիչ-բանաստեղծները՝ Մխիթար Սեբաստացի, Պետրոս Նախիջևանցի, Պաղտասար Դպիր, Հակոբ Նալյան, Հովհաննես Կարնեցի, Հակոբ Շահամիրյան և այլք «Մատեանը» մեկնաբանում են, քննում, տպագրում են աղբյուրագիտական նշումներով, արձակ և չափածո հիշատակարաններով. «Մատեանը» մուտք է գործում XVIII դարի քերականության, ճարտասանության դասագրքերը, պատմագիտական աշխատություններն ու բառարանները։ Այստեղ դիտելի է մի նուրբ անցում։ XVIII դարում Նարեկացու «Մատեանը» ծիսական, կրոնական գրականությունից արդեն վճռականորեն անցնում է նաև աշխարհիկ, գիտական, կրթական գրականություն։ Այս երևույթի առաջին կրողն էր Մխիթարյան դպրոցը։ Մխիթար Սեբաստացին իր ճարտասանական, քերականական դասագրքերը համեմում է Նարեկյան գեղեցկառճ օրինակներով։ Մեծ հայկաբանը անդրադառնում է նաև Նարեկացու անձի ու գործի գնահատության հարցին։ Սեբաստացին զարմանալիորեն նուրբ, ճշմարիտ ու խորունկ գեղագիտական ընդհանրացումներ է անում Նարեկացու բնատուր հանճարի, նրա անհատականության մասին։ Մխիթարյան դիվանում, հայագետ Ս. վ. Ճեմճեմյանի վկայությամբ, պահվում են «Հայկազեան բառարանի» համար «Նախնեաց մատենագրութիւնից»՝ «Խորենացի, Նարեկացի, Շնորհալի, Լամբրոնացի, Աստվածաշունչից քաղված բազմաթիվ բառացանկեր՝ անձամբ Մխիթար Սեբաստացու և նրա աշակերտների կողմից կազմած»[16]։ Միքայել Չամչյանն իր «Հայոց պատմության» մեջ առանձին բաժին է հատկացնում Նարեկացուն՝ ներկայացնելով նրա կյանքի և գործունեության կարևոր էջերը։

Նախորդ դարերում Նարեկացու շուրջ ստեղծված ու տարածված ժողովրդական բազմաթիվ զրույցներից նոր ժամանակներում ստեղծվում է մի գողտրիկ վիպական պատմություն՝ 17 մասից բաղկացած։ Վիպերգությունը կրում է «Վարք և պատմութիւն սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն» խորագիրը։ Հեղինակն է Մովսես քահանան։ Ձեռագրերում պահպանվել են այդ վիպասանության նորագույն տարբերակային ընդօրինակությունները՝ 1806, 1837 թթ., վերջինս ընդօրինակված է 1713 թ. գրչագրից[17]։

Նարեկացու պատմական հեղափոխիչ դերը հայոց դասական բանաստեղծությունը համաշխարհային բարձունքի հասցնելու և հին, հեթանոսական բանաստեղծությունը ճանաչման ներկայացնելու հարցերում անգնահատելի է մեծանուն գիտնական Արշակ Չոպանյանի դերը՝ ինչպես միանգամայն ճիշտ նկատում է պատմաբան Կարլեն Դալլաքյանը իր «Արշակ Չոպանյան» ուշագրավ մենագրության մեջ[18]։ Նարեկացիագիտությունը, սակայն,

---

15 «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 265։

16 Սահակ վարդապետ Ճեմճեմյան. Մխիթար Աբբահոր հրատարակչական առաքելութիւնը. Վենետիկ, 1934, էջ 112։

17 Մեր օրերում Նարեկացու մասին զրույցները հավաքել և ծանոթագրել է ակադեմիկոս Արամ Ղանալանյանը (Ավանդապատում. Երևան, 1969, էջ 306—320)։

18 Կ. Դալլաքյան. Արշակ Չոպանյան. Երևան, 1987։

ինչպես նկատեցինք, զարգացման նոր ընթացքի մեջ է մտնում դեռևս XVIII դարում։ Այն նպաստում է նաև դարի կրոնաազգային դասական բանաստեղծության վերելքին։

«Մատեան ողբերգութեան» պոեմի կենսափիլիսոփայության անմիջական ազդեցությամբ ստեղծվում են ողբի և սթափման բազմատեսակ երգեր՝ քնարական ներբողներ, նկարագրական, գիտական-ուսուցողական, ճանաչողական մեծ ու փոքր բանաստեղծություններ, ստեղծվում է մի նոր Մատեան «Աղօթական բանք ի խորոց սրտէ ստորաբէկ զղջմամբ»...

Դարի նարեկաշունչ երկերի ղդալի մասում նույն երկինքն է ու երկիրը, նույն սրբերն ու մարգարեները, Մարիամը, Քրիստոսը, նույն ինքը՝ ամենակարող աստված, և այս բոլորի կենտրոնում կանգնած մարդ արարածը՝ XVIII դարի բանական գոյը՝ իր նոր աշխարհազգացողությամբ, բայց և հոգու նույն տառապանքով, նույն ողբով և լացով. բանաստեղծությունը քննադատաբար մարդու վերափոխության ուղիներն է նշում՝ հայոց հասարակական, տնտեսական, կրոնաազգային ժամանակակից կյանքի պահանջներից ելնելով։ Այստեղ է, որ որոշակի արտահայտություն է ստանում բանական գոյի մասին նարեկացիական կենսափիլիսոփայությունը.

Կատարեա՛ դիս տէր, լինիլ քեզ նման,
Որքան որ տանի իմս էութիւն,
Քանզի տիրապէս կատարեալ դու ես...[19]։

«Զափավորի՛ր Տեր, իմ զգացական հատկությունները, բանականությամբ առաջնորդիր ինձ, բացիր իմ աչքերը՝ արատներս տեսնելու...»,— թախանձում է Պետրոս Նախիշևանցին իր «Աղօթականք բանք ընդ աստուծոյ ի խորոց սրտէ...» պոեմում.

Զարթո՛ դաշս իմ դիմացական յայիլ յիս,
Եւ իմանալ դաղեղութիւնս,
Եւ ճանաչել զչափ անձի իմոյ...[20]
Եւ, արդ ո՞վ անձն իմ ամենամեղ...
Մինչև ցե՞րբ դիմակս կերպից ողբոց ջարաղրես...
Վա՜յ ինձ, յաւուր ամենայնի,
Եւ քանզի անօգուտ է ինձ սուգն, որ անդրէն աստէն ողբացից[21],—

ուսուցիր ինձ Տէ՛ր,— դարձյալ աղերսում է բանաստեղծ, որպեսզի ես բանականությամբ կառավարեմ ինքս ինձ, սաստեմ մարմնիս վնասակար կրքերը, լինեմ արդարամիտ, իրավասեր, պաշտպանեմ իմ «ազգի տնանկաց»՝ «գայլերի հարձակումներից»։ Պետրոս Նախիշևանցին «Ի խորոց սրտէ» վերապրում է Նարեկացի հանճարի բոլոր հույզերն ու գաղափարները՝ հայոց ժամանակակից կյանքին համահնչուն.

Զորացո՛, դհոգիս հնազանդել դմարմին,
Զորացո՛, դմիտս դիւրութեամբ թագաւորել յիս[22]։

«Տէր ողորմեա՛»,— աղաչում է Մովսես Ջուղայեցին «Ողոք աղէրսուաց արտասուաց» քնարական իր պոեմում, բանական գոյի բյուրավոր ցավերի համար. «Ցողեա՛ զցող շընչոյդ».

---

19 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 6532, էջ 46բ։
20 ՄՄ ձեռ. № 10, էջ 147ա։
21 Նույն տեղում, էջ 132բ։
22 Նույն տեղում, էջ 29բ։

Յոսոխաց երից,
Յաւէտ պարտեցեալս,
Յարաժամ տանջիմ.
Նետից բանսարկուին
Նպատակ եղէ,
Նովիմբ սատակիմ.
Տէ՛ր, ողորմեա՛...
Յնծութիւն բնաւից,
Յողեա՛ զցող շընչոյդ,
Յաւոյս զօվացումն...
Տէ՛ր, ողորմեա՛...[23]

XVIII դարի թափառական հայը իր հետ կրում է «Մատեանը» իբրև իր հոգեոր և գիտակցական կյանքի ուղենիշ, հույսի, լույսի, վերակենդանության աղբյուր...

Բարուն պայծառ և ցանկալի,
Տէր սուրբ Գրիգոր Նարեկացի,
Միշտ առ աստուած հոգով խօսի,
Բանիւք իւր ընտիր՝ հանուրց յայտնի...
Ուծեալ եմ ես մեղօք նուաստ,
Թերես լիցի հոգւոյս նպաստ,
Զքմրեալ հոգիս առնէ զգահտ,
Որք մտանեն ի յայս գարաստ[24],—

գրում է Իգնատիոս Ջուղայեցին։

Ո՜հ, խաւարն անլոյս
Տարածեալ գինև յոյժ,
Խաւարն տարածեցաւ,
Լուսաւորեա՛ զիս Մարիամ[25],—

աղերսում է Պաղտասար Դպիրը։

Աւա՜ղ ինձ որ ի կեանս եկի,
Զօգուտ իմ ո՜չ գարակեցի,
Զքաջուն գանձն ի յագարակի ո՜չ գտի...,—

զժգոհում է Պաղտասար Դպիրը «Մատեանի» գաղափարներով համակված իր բազմաթիվ երգերում։

...Զիս ըմոլեկանս ըզգօնացո,
Պաղատիմ առ ջեզ,
Դարձո՛ ի բարիս ըստ ջո հետոյն
Արա՛ բանական[26],—

Թախանձում է բանաստեղծը։

«Ահա, ես ինքն ինձէն կամաւորապէս անձնամատն և մարմնակործան»,— ողբում է Նարեկացին, «աղաղակեմ զմեղանս իմ դիտելով ինձնէ...», «ինձէն ինձ խորխորատ բացի»—ողբում է Պաղտասար Դպիրը.

---

23 ՄՄ ձեռ. № 828, էջ 48ա։
24 Բանք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ. Վենետիկ, 1863, էջ 309—310։
25 Պաղտասար Դպիր. Տաղարանիկ սիրոյ և կարօտանաց. Կ. Պոլիս, 1768, էջ 17։
26 Տե՛ս «Բաղմավեպ», 1986, № 1—4, էջ 202—234։

Ի պատկեր արարչին իմոյ ըստեղծայ,
Նւ բղխութիւն բանականի ընկալայ,
Բայց ի պատկեր անասնային փոխեցայ.
Զնոցինն իսկ բերելով ի յիս կերպարան[27]։

Նարեկացիագետ բանաստեղծը երգում է իր «երգն ողբական» և կերպավորում է իր դարի «մարմնական ցանկություններով մթագնված», իր ժամանակի «Հոգեկորույս» և «մարմնակործան», իր դարի «յանասնոց Հանգունացեալ», իր դարի «Հոգւոյ բանական և ի մարմնոյ զգալի» մարդուն, ողբում է նրա ցավը, և մատնացույց անում Համաքրիստոնեական գաղափարախոսության ճանապարհը՝ իբրև այլակրոն օտար բռնակալական իշխանությունների լծից Հայոց ազգն ու Հավատքը փրկելու միակ միջոց.

Այրեցին զտաճար սրբութեանդ քոյ,
Պղծեցին բզխորան անուան քո սրբոյ,
Անուան քո սրբոյ.
Որ ասացեր. «Իմ է վրէժխնդրութիւն».
Դատեա՛, տէր, զայնոսիկ, որք դատեցին զիս
Եւ ատեցին զիս[28]։

«Մեղա՜յ, տէր, մեղա՜յ»,—Հառաչում է Պաղտասար Դպիրը, ինչպես Նարեկացին...,—«Խլի՛ր կենդանական չարութեան մոլեգին ղէնքն»,—աղերսում է Պաղտասար Դպիրը, ինչպես Նարեկացին։—«Ապրեցո՛ զիս», «կենսագործեա՛ զիս», «լուսաւորեա՛ զիս», «տո՛ւր զօրութիւն ընդդիմանալ ներհակին», «լէ՛ր օգնական ի մարտի», «պահպանի՛ր զմեզ ի չար գազանէ», «ների՛ր ըզլերան Հանգոյն Հանցանս», «լո՛ւր թիկունս», «տո՛ւր ինձ բանական զօրութիւն խափանելու ծով մեղքերիս աննավավար ընթացքը»,—թախանձում է Պաղտասար Դպիրը Հույսի ու Հավատի իր նարեկաշունչ երգերում.

Անձն իմ, ընդէ՞ր Հառաչմամբ ի Հոգ մրտաց վարանիս.
Կամ զի՞ ի խոր տըրտմելով, Հոգոց Հանեալ տառապիս.
Մի՛ լար, մի՛ լար, մի՛ Հոգար,
Այս ամենայն անցանէ[29]։

Նարեկացու ողբի քննադատական ոգին նոր լիցք է տալիս XVIII դարի ողբասացներին։ Պետրոս Ղափանցին նույն ողբն է ողբում ազգին նվիրված իր նարեկաշունչ երգերում.

Բարձրաձայնեալ զօր ամենայն վայվայեմ,
Մագլովք ղերեսս պատառոտեալ քայքայեմ,
Անծարացեալ ըզտերեւս փայփայեմ.
Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ աննման,
Գեղըդ նման արեգական վառվառման։
Տառապանօք սիրով քոյին դեգերիմ,
Ի սուգ, ի լաց կալեալ-կապեալ՝ ես գերիմ,
Հուշիմ, մաշիմ և բիւր ցաւօք երերիմ...
Ողբակենցաղս և լալակոծ բազմամեայ,
Սրգաւորաց լըրմանն եղէ առարկա,
Եթէ Համիս՝ բողոք կալնում առ արքա...[30]

Այսպես է սգում «ողբակենցաղ և լալակոծ» բանաստեղծը իր «վարդ» Հայրենիքի պետականության կորուստը, իր Հայրենիքի սերը։ Նարեկացու Ող-

---

27 Պաղտասար Դպիր. [Տաղարան անխորագիր]. Կ. Պոլիս, 1768, էջ 45։
28 Պաղտասար Դպիր. Տաղիկներ սիրոյ և կարօտանաց. Երևան, 1958, էջ 135։
29 Նույն տեղում, էջ 138։
30 Շ. Նազարյան. Պետրոս Ղափանցի. Երևան, 1969, էջ 279—280, 288, 290։

բի հուզականության ուժն ու թափը համակել է Ղափանցի ողբասացին. «...էի, եմ և եղից վարժարան սգոց», «հմուտ հեղինակ հառաչմանց յոգ-ւոց...»։

Ողբը «ի խորոց սրտէ», «հեծեծանքն ու «հառաչանքը» չեն հանգստացնում տառապյալ երգչին.

Ողբացէ՛ք ղիս այսօր վարդիս պոյժ տալով
Կարոտով մեռանիմ ի բացեայ գոյով,
Օրերս իմ անցուցի ողբով և լալով.
Ահա՛, նրւաղիմ և շնչաքաղիմ,
Անկեալ հոգեվար՝ ի երկիր թաղիմ։
Ցարածեմ ըղթես իմ, առ աստուած գոչեմ,
Ի խորոց սրտէ, միշտ հեծեմ, հառաչեմ.
Պահեսցէ՛ ըզվարդն իմ՝ անկեալ աղաչեմ[31]։

Իսկ «Առ ազգն ի պատուելի խորհրդաբար նշանակութեամբ վարդի» բանաստեղծության մեջ Պետրոս Ղափանցին թախանձում է իր ժողովրդին՝ լեռներում պատսպարվել, բանակ, զորագունդ պահել, օթևանել՝ մինչև հասնի բաղձալի ժամը.

Քեզ կարմելոս և Լիբանան, այլ և Սանիր,
Սահման կալեալ, բանակ արկեալ՝ օթևանի՛ր,
Մինչև անցցէ ձիւն և ձրմեռն՝ անդրէն խնամիր.
Ըղքեզ ծանի՛ր,
Լուսոյ նմանի՛ր,
Փոյթ մի՛ բանիր[32]։

Ղազար Ջահկեցին 1737 թ. տպագրում է «Ողբ ի վերայ Հայաստանի աշխարհին» բանաստեղծությունը, ուր դարձյալ «ի խորոց սրտէ հեծեծմամբ» հառաչում է, թե ո՞ւր են «մեր փառազարդ իշխանքն», «քաջամարտիկ և զորավար Վարդանները, Մուշեղները, Վահանները, Տրդատ Հզոր արքան. Արշակունիները»՝

Որ պատերազմին վասըն մեր,
Ազատին զգերեալքս ամենայն,
Փրկելով ղազգս և զազինս,
Եւ համայն զաշխարհ Հայաստան[33]։

Ղազար Ջահկեցին իր ազգային ցավերը երբեմն արտաբերում է Նարեկացու ոճին հար և նման պատկերներով։ «Երգ վշտացելոց անձանց» խորագրով բանաստեղծության մեջ տողեր կան, որ հիշեցնում են Նարեկացու «Մատեանի» թ գլխի վերևում նշված հանրահայտ մտքերը.

Երկիրրս մագաղաթ և ծովքըն մելան,
Եւ դրրիչ իսկ առնել ըզմայրս Լիբանան,
Ի կիր արկեալ զմեղանս ո՞չ են բաւական,
Կամ ի չափ քանակաց և ո՞չ թըւական[34]։

Ղազար Ջահկեցու «Գիրք աղօթից, որ կոչի Աստուածաղերս» երկը, որ անցյալում տպագրվել է չորս անգամ, ստեղծվել է Նարեկացու «Մատեանի» անմիջական ազդեցությամբ։ Գրքի երկրորդ մասը, որ գերակշռում է առա-

31 Նույն տեղում, էջ 233, 233։
32 Նույն տեղում, էջ 233։
33 Ղ ա զ ա ր Ջ ա հ կ ե ց ի. Գիրք նորարոյս, որ կոչի Երգարան. Կ. Պոլիս, 1737, էջ 239։
34 Նույն տեղում, էջ 234։

չինին, ներկայացնում է «Մատեանի» հատընտիրը. «Աղօթք աստուածաղերս և մշտամատոյց ի սուրբ գրոցն Գրիգորի Նարեկացւոյն, հաւաքեցմամբ շարայարեցեալ Տէառն Ղազարու յամենիմաստ հայրապետին, յաղագս իւրաքանչիւրոց անձանց աղօթողաց»։

«Մատեանի» քննադատանքի, ինքնադատանքի ոճը աստիճանաբար դառնում է տիրապետող։ XVIII դարի ողբական քնարերգությունը, ի տարբերություն նախորդ դարերի, Նարեկյան ողբի կենսափիլիսոփայության այս նրստվածքն ունի։ Ոմանք Նարեկացու այս կենսափիլիսոփայությունը գունազարդում են «միստիցիզմ» արտահայտությամբ։ Հայտնի է, որ միստիցիզմը քրիստոնեական միջնադարում ընդդիմադիր (օպոզիցիոն) առաջադիմական դեր է կատարել, ինչպես բնութագրում է Ֆ. Էնգելսը։ Նարեկյան միստիցիզմը միայն և միայն հետապնդում է միջնադարյան քրիստոնեական հավատքի ամրապնդման, մարդու բարոյական ապաքինության, հայոց ժամանակակից կյանքի բարեփոխության նպատակները։ Դա է հանճարեղ բանաստեղծի գեղագիտական մտահայացքը։ Սխալ չհասկանանք. եթե ոմանց կարծիքով միստիցիզմը մարդու անդրշիրիմյան կյանքի գաղափարն է փայփայում, ապա Նարեկացու մոտ չկա այդպիսի գաղափարի դույզն ձգտում։ Ինչպես արդեն նկատեցինք, Նարեկացին «մահը չարիք» է համարում։ Մեծ հումանիստի մտահոգության հարցը իրական, առարկայական ընդհանուր աշխարհի և հայոց հոգևոր ու պետական կյանքի առաջադիմության, վերափոխության հարցն է, այդ կյանքի կենտրոնում կանգնած մարդու կատարելության, աստվածայնացման խնդիրը։ Հենց այս գաղափարներն են ոգևորել Նարեկացու քնարերգության XVIII դարի երկրպագուներին։ Եթե Նարեկացին ասում է «ձուլվել», «միանալ երկնայինին»՝ «միավորիր քեզ հետ իմ հոգին», ապա դա նշանակում է, թե Նարեկացին մարդուն առաջարկում է հասնել աստվածային անբիծ, անարատ մաքրությանը, պատրաստ լինել հանուն ճշմարտի՝ կրելու Քրիստոսի չարչարանքները։ Աստված, ըստ Նարեկացու, անշունչ բանական է, անտես, անկենդան, անհուն և անսահման, անմբռնելի՝ ինչպես բնությունը, իսկ մարդը՝ իրական, բանական, շոշափելի, կենդանի, շնչավոր դոյ է, հողածին, նա պետք է ձգտի հասնելու աստծու էությանը, կատարելությանը, նա պետք է ապրի իր հողի վրա՝ աստվածավայել։ Նա պետք է «երկրի վրա ապրի և ինչպես մահկանացու մեռնի մարմնով, իսկ հոգով, իր գործով անմահանա։ «Խորտակեալս կազդուրեսցես դեղ կենաց...», որպեսզի նա օգտակար լինի կյանքի համար և թեթև լինի նրա վախճանը, ապրի նաև մահից հետո, գործով, բարի, առաքինի անունով։ Այս է Նարեկացու այսպես կոչված «միստիցիզմը»։ Այս դիրքերից է նա անողոք քննադատության ենթարկում բոլոր «ստահակներին», «որոգայթ լարողներին», «խաբեբաներին», «բռնավորներին», «ուտիչ ցեցերին», «մահ որսողներին».

Պակասեցին դէնք զրպարտողին,
Անկցին սուսեր մահաբերին...35

Ահա թե ինչու ողբի ու սթափման բանաստեղծությունն առհասարակ և XVIII դարի հոգևոր և աշխարհիկ դասական բանաստեղծությունը, առավել ևս, առաջնորդվում է հավատք և հայրենիք, կրոն և գիտություն, հույս և լույս միասնական գաղափարով։ Գեղագիտական այս ըմբռնումները բխում են նաև «Մատեան ողբերգութեան» պոեմի կենսափիլիսոփայության ակունքներից։ «Զամենայն ինչ հնարաւոր է այն, որ հաւատամբ», «քանզի հաւատք քո կեցուցին զքեզ», «եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց հաւատոցն շինուած կառուցից»,—սահմանում է Նարեկացին։

Նարեկացու հավատը վերացական հասկացություն չէ և ոչ էլ միանշանակ, այն «անվթար է և անփակելի», «հրածագ և մշտապես համապատիվ և պատվակից՝ սիրո և հույսի»...

35 Բան Ղ., էջ 604։

Քանզի արդարեւ սեռն տեսութիւն,
Եւ կատարեալ իմաստութիւն,
Եւ առ աստուած ընտանութիւն,
Եւ բարձրելոյն ծանօթութիւն
Հաստոց մասն երջանիկ եւ ընտրեալ անուն,
Որ յարածագեալ մնայ անվթար եւ անփակելի՝
Պատուակից գոլով սիրոյ և յուսոյ[36]։

Նոր ժամանակներում գիտնական, բանաստեղծ Հակոբ Նալյանը, ավելի քան որևէ մեկն անցյալում, «Նարեկի» իր մեկնության մեջ, հատկապես ժ գլխում, հանգամանալից բացատրում է «Մատեան ողբերգութեան» երկի բովանդակության հիմքային այս գիծը՝ հավատք, հույս և սեր գաղափարի նարեկյան ըմբռնումը։ Նալյանը, ինչպես քրիստոնեական հավատքի բոլոր նշանավոր գործիչները, մերժում է հավատի մերկապարանոց, ինքնանպատակ՝ «հավատքն ինքն իր համար, հավատքն ինքն իր մեջ», ըստ էության վերացական հայացքը։ Հավատն անհերևույթ լինելով հանդերձ պետք է, մարդուն մղի դեպի իրականություն, հավատ սերտ կապի մեջ պետք է լինի հույսի և սիրո, կյանքի հետ։ Քանզի «հաւատն ընդ յուսոյ և ընդ սիրոյ միշտ մնայ անվթար, անեղծ և անսխալ»,—ընդգծում է Հակոբ Նալյանը[37], «Եվ թէ որքան գործունեայ և արդիւնաւոր էր սուրբս Գրիգոր ի սիրել, զի նրէ սէրն ո՛չ երբէք է դատարկ, այլ գործ է զմեծամեծս, թէ է, և դադարի ի գործելոյ. ո՛չ է սէր, որպէս հուրն շիջեալ ածուխ ասի է ո՛չ հուր»[38]։ Հավատքն իմաստավորվում է բարի գործով և իր հետ բերում է սեր և հույս։ Ահա հավատքի նարեկացիական անեզր, համայնապարփակ հասկացությունը։ Եվ ահա թե ինչու Նարեկացին իր «Մատեանի» նպատակակետն է դարձնում «հաւատքի շենքի կառուցումը» կամ «հաւատքն տեսակաւորեալ գործով բարեաց» գաղափարը, որ այնքան հիմնավորված մեկնաբանում է Հակոբ Նալյանը։ Ըստ Նալյանի, անօրինակ է Նարեկացու «Մատեանը», անհերևակայելի, անհասանելի, անկրկնելի՝ թե՛ գաղափարական բովանդակությամբ, թե՛ մարդասիրությամբ և թե՛ արվեստով։

Իր մեկնություններից հետո, եզրափակիչ բանաստեղծություններում, ներբողներում, և՛ հիշատակագրական բնույթի չափածո երգերում, Նալյանը վերստին բարձրացնում է «Մատեանի» համամարդկային նշանակությունը, բնութագրում Նարեկացի մտածողի, փիլիսոփայի, հրեշտակական վարդապետի հանճարը, արժեքավորում է «Մատեանն» իբրև աստվածաբանական-փիլիսոփայական եղակի երկ, իբրև իմացաբանական, բարոյագիտական հանրագիտարան։ «Մատեանը» հրաշագործություն է, հույսի ճանապարհացույց, մարդկային հոգու հայելի, ուր ամեն ոք կարող է տեսնել իրեն՝ ինչպես որ կա, նրա մեջ գտնել էր երազանքը, իր սերը, իր հույզն ու հավատը։ Այս բանաստեղծություններում ևս մի զարմանալի իմացական գիծ է զարգացնում Նալյանը՝ քրիստոնեական հավատքի, սուրբ երրորդության և հունական մատերիալիստ փիլիսոփաների, հերակլյան աշխարհաճանաչողության միջև.

Երրորդութեան մի տէրութեան,
Փառք և պատիւ յաւիտեան,
Որ համայնից տալ գոլ և կեան,
Խոստանայ փառք հանգստեան.
Զնղու շընորհ ծովանըման,
Քան ըղհոսանս Հերակլեան,
Ամէն մէկի տայ ըստ տարփման,
Զէտ հայելւոց ըստ տեսլեան[39]։

36 Բան. ժ, էջ 283։

37 Հակոբ Նալյան. Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հրեշտակական վարդապետի. Կ. Պոլիս, 1745, էջ 91։

38 Նույն տեղում, էջ 9։

39 Նույն տեղում, էջ 1053։

Նալյանը իր բանաստեղծություններից մեկում, որը եզրափակում է 73-րդ գլխի մեկնությունը, ընթերցողին հանձնարարում է ատյան հանել, ժողովի նստել, քննել Նարեկը համոզվելու համար, որ աշխարհի բոլոր մեծությունները համբանում, խեղճանում են Նարեկացու առաջ.

Դի՛ր առաջի քոյ զայն ատեան,
Ցոր Տէրտուղոսըն քաշաբան,
Եւ Սողոմոն որդի Դաւթեան,
Լինին համերք անխօսական.
Անդ Օդոստոս հանրից արքայն,
Լինի աղքատ ւ անընչական,
Անդ դաւիւծու ուժն ունական,
Է՛ նապաստակ երկչոտական,
Անդ Կրրասոս փարթամ արքայն,
Զէտ Սանդիտոոն է մերկական...[40]

Հավատքի նարեկացիական համայնապարփակ ըմբռնումն է իշխում XVIII դարի ողբի և սթափման բանաստեղծության լավագույն էջերում և կենսափիլիսոփայական այդ հայացքն է ընկած նաև դարի գրական շարժման բոլոր հարցերի հենքում։

Հիրավի, ազգաձուլման ահեղ վտանգի առջև կանգնած հայ ժողովրդի գոյատևության, ինքնաճանաչման ու դիմադրողական պայքարի համար նախ և առաջ մեծ դեր ուներ կատարելու հայի հավատքը, հայոց ընդհանրական եկեղեցին՝ կաթողիկեն։ Պատահականություն չէ, որ կաթողիկեի հզորացման հարցն էր մտահոգում X—XIV դդ. վերածննդի բանաստեղծության նշանավոր ներկայացուցիչներին՝ Անանիա Նարեկացուն, Գրիգոր Նարեկացուն, Վարդան Հայկազնին, Ստեփանոս Օրբելյանին, Մխիթար Այրիվանեցուն և այլոց, և նույն խնդիրն են բարձրացնում նաև XVIII դարի դասական բանաստեղծները.

Կաթողիկէ մեզ կառուցեալ,
Անվանելի ի դրանց դըժոխոց,
Եւ ղովն օծման զետ աւետեալ,
Մա՛յր պաշտելի, սուրբ էջմիածին[41],

ներբողում է Պաղտասար Դպիրը։

Էջմիածի՛ն, աստուածակերտ խորան լուսոյ,
Մասեան լերին փառք և պըսակ, մա՛յր հաստատոյ,
Իշմամբ բանին առ ի հօրէ տէառն աստուծոյ,
Երքեղացար անճառ փառօք որպէս դոխոյ...

Եղեմ դրախտին տիպ և պատկեր ամենի՛ն,
Զմեզ զմայլեցս շնորհիւ քոյին սիրով ուժգին,
Զարթի՛ր, դիա՛, տառապելով քոյոյ հոտին
Եւ ժողովեալ բնակ՛ լ ի քոյդ սուրբ անկողին[42],—

թախանձում է Պետրոս Ղափանցին։

Ի ւիծեալ տառապելոց որդեացս
ողորմեա՛, ողորմեա՛,
Ի հողից բանսարկուին ըմբեղ

40 Նույն տեղում, էջ 608։
41 Պաղտասար Դպիր. Տաղիկներ, էջ 97։
42 Պետրոս Ղափանցի, էջ 305։

ազատեա՛, ազատեա՛։
Ո խղճալի Ղազար դերոյս
ա՛յց արա, ա՛յց արա...[43] —

ողբում է Ղազար Ջահկեցին Էջմիածնին նվիրված երգերում։

Էջմիածինը՝ կաթողիկեն, հայ ժողովրդի հավաքականության խորհրդանիշն է եղել X—XIV դդ. վերածննդի քնարերգության մեջ և այդ գաղափարն են վերստին, մի նոր ուժով բարձրացնում նաև XVIII դարի քնարերգուները։

Այսպես ուրեմն. XVIII դարում, ի տարբերություն նախորդ դարերի, նարեկացիական շարժումը ներթափանցում է հայ գրական, մշակութային կյանքի գրեթե բոլոր ոլորտները՝ ձեռագրերի, տպագիրների աշխարհ, պատմության, քերականության, ճարտասանության դասագրքեր, գեղարվեստական, մեկնողական, վերլուծական-փիլիսոփայական դրականություն և այլն։ Ստեղծվում են Նարեկացուն նվիրված բազմաթիվ նոր ներբողներ, զրույցներ, տեսիլներ, պոեմներ, ողբի և սթափման քնարական անհամար երգեր։ XVIII դարի վերանորոգվող գրական շարժումը, Նարեկյան ողբի արձագանքներով, նպաստում է XIX դարի հայոց նոր դասական բանաստեղծության բուռն վերելքին։

ОТЗВУКИ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ НАРЕКАЦИ В ПОЭЗИИ XVIII в.

Доктор филол. наук Ш. Л. НАЗАРЯН

Резюме

В XVIII в. начинается программное обновление армянской классической поэзии на грабаре и ашхарабаре. Уже начиная с V в. в армянской средневековой духовной песне, в молитвах и «шараканах» наряду с мотивами горя и страдания появляются элементы самоутверждения и борьбы. Истинное возрождение армянской классической поэзии, духовной и мирской песни приходится на период всеобщего подъема армянской культурной жизни X—XIV вв. Впервые главным героем становится человек—верующее, мыслящее существо со своей индивидуальностью, с новым мироощущением. Первичной задачей поэзии становится усовершенствование человека.

В XVIII в. в условиях развития армянской общественной, политической и культурной жизни многие национальные деятели-поэты (Мхитар Себастаци, Хачатур Эрзрумеци, Пахтаоар Дпир, Петрос Капанци, Акоп Нальян, Петрос Нахиджеванци и др.) стремятся возродить достижения армянской литературы, утерянные в период спада (XIV—XVII вв.). Они изучают армянскую литературную, эстетическую, историографическую, философскую мысль прошлого и, основываясь на успехах европейской и русской цивилизации, пытаются создать новую национальную поэзию. В этих условиях зарождается проникающее во все сферы армянской литературной жизни движение, связанное с изучением творчества Нарекаци.

43 Ղ ա զ ա ր Ջ ա հ կ ե ց ի. Երգարան, էջ 111։